ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼՆԵՐ-25/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՂ» մեդալը պատրաստված է 2 մասից՝ չժանգոտվող ցինկապատ պողպատե հնգանիստ կախիչից և դրան արծաթագույն կապօղակով ամրացված սկավառակից: Մեդալի կախիչը ասեղային ամրակով ամրանում է պարգևատրվողի հագուստին: Կախիչի չափսերն են՝ 45 մմ լայնություն, 50 մմ երկարություն: Կախիչը պաստառված է ժապավենով, որը բաժանված է 11,5 մմ լայնությամբ հավասարաչափ կապույտ և մոխրագույն շերտագծերի, որոնց կենտրոնով վերից վար անցնում է 1 մմ լայնությամբ սպիտակ շերտագիծ: Սկավառակը պատրաստված է պղնձի հատուկ համաձուլվածքից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է: Սկավառակի եզրագծին զուգահեռ, աջ և ձախ կողմերում առկա են ոսկեգույն դափնու տերևներ, իսկ ներքևի մասում կորաձև տեղակայված է 3,2 մմ լայնությամբ, կապույտ, էմալապատ, ոսկեգույն եզրագծերով ժապավեն, որի մեջ մեծատառերով, ուռուցիկ և կորաձև գրված են՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՂ» բառերը, որոնց բարձրությունը 1,6 մմ է: Սկավառակի կենտրոնում տեղակայված է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ռելիեֆային 27X13 մմ չափսերով խորհրդանիշը: Սկավառակի հիմնական գույնն արծաթագույնն է: Մեդալի դարձերեսին առկա է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» հորիզոնական եռատող ռելիեֆային ուռուցիկ գրառումը, որի տառերի բարձրությունը 2,2 մմ է, իսկ ներքևի հատվածում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալը պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ (160X110X32մմ): Մեդալի վերջնական արտաքին տեսքը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԵԴԱԼՆԵՐ-25/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	